ԳԱՅԱՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆ
ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի
ավագ հետազոտող,
տնտեսագիտության թեկնածու

ԿՐՈՆԱԿԱՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Կրոնական զբոսաշրջությունը ենթադրում է ուխտագնացություն, ինչպես նաև ճանաչողական-էքսկուրսիոն բնույթի կրոնական այցեր: Հոդվածում վերլուծվում են կրոնական զբոսաշրջության զարգացման հնարավորությունները և նախադրյալները Արցախի Հանրապետությունում, զբոսաշրջության ոլորտի առկա վիճակը, բնորոշվում է կրոնական զբոսաշրջության էությունը, բացահայտվում են կրոնական զբոսաշրջության զարգացման հեռանկարները՝ դիտարկելով հիմնական կրոնական զբոսաշրջային վայրերը (եկեղեցիներ, վանական համալիրներ, ինչպես նաև մզկիթներ, որոնք կարող են գրավել մահմեդական զբոսաշրջիկներին):

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրակացության, որ Արցախի Հանրապետությունը հարուստ է կրոնական զբոսաշրջության վայրերով, ուստի կրոնական զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել ակտիվ մարքեթինգային գործունեություն, բարելավել զբոսաշրջային ենթակառուցվածքները, զբոսաշրջային ծառայությունների գին-որակ ցուցանիշները, իրականացնել ոլորտը սպասարկող կադրերի պատրաստում և վերապատրաստում, մշակել կրոնական զբոսաշրջության զարգացման ռազմավարական ծրագիր՝ ընդգրկելով բոլոր կրոնական վայրերը և մշակելով տարբեր երթուղիներ:

Հիմնաբառեր. *զբոսաշրջություն, կրոնական զբոսաշրջություն, եկեղեցի, վանական համալիր, մարքեթինգ, Արցախի Հանրապետություն*

JEL: L83, Z10, Z12

Ներածություն: Կրոնական զբոսաշրջությունը զբոսաշրջության ամենահին և ամենաարագ զարգացող տեսակներից է: Ըստ էության, դա ճանապարհորդության այն տեսակն է, որի հիմնական նպատակը կրոնական սրբավայրեր այցելելն է: Կրոնական զբոսաշրջության զարգացումը կապված է համաշխարհային երեք կրոնների՝ բուդդայականության (մ.թ.ա. 6-5 դարեր), քրիստոնեության (մ.թ. 1-ին դար) և իսլամի (մ.թ. 7-րդ դար) տարածման և հավատացյալների՝ դեպի սուրբ վայրեր ճանապարհորդելու հետ:

Հայաստանը համարվում է քրիստոնեությունն առաջինը որպես պետական կրոն ընդունած երկիրը (301 թ.): Հայկական եկեղեցին Հին արևելյան ուղղափառ հինգ եկեղեցիներից մեկն է և առաքելական է, քանի որ հիմնվել է ուղղակիորեն տասներկու առաքյալներից երկուսի՝ Սուրբ Թադեոսի և Սուրբ Բարդուղիմեոսի կողմից, ովքեր էլ ձեռնադրել են առաջին հայ եպիսկոպոսներին[1]:

Ինչպես Հայաստանը, այնպես էլ Արցախը ունեն կրոնական զբոսաշրջության զարգացման նախադրյալներ և հեռանկարներ: Սույն հոդվածում կվերլուծենք Արցախում այդ ուղղության զարգացման հնարավորությունները՝ հիմնվելով առկա ներուժի վրա:

Գրականության ակնարկ: Կրոնական զբոսաշրջությունը կարող ենք բնորոշել որպես կրոնական նպատակներով կատարած ճանապարհորդություն: Կրոնական նպատակներով մարդիկ սկսել են ճամփորդել՝ հին ժամանակներից սկսած:

Կրոնական զբոսաշրջության հետ մեկտեղ կիրառվում է «ուխտագնացություն» հասկացությունը, որը կրոնական ճանապարհորդությունն է դեպի «սուրբ վայրեր»[2]:

Եվ այսպես, կրոնական զբոսաշրջությունը անվանում են նաև «հոգևոր զբոսաշրջություն», «ուխտագնացություն», «մշակութային զբոսաշրջություն»: Դրա հիմնական նպատակներն են՝

- ուխտագնացություն՝ որպես պաշտամունքի գործողություն,
- երախտագիտություն հայտնել, ապաշխարել և ուխտ կատարել,
- հոգևոր փրկության հասնել,
- հարգել և նշել որոշակի կրոնական իրադարձություններ,
- հավատացյալների հետ շփվել[3]:

Ըստ ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության տվյալների՝ տարեկան 300-330 միլիոն զբոսաշրջիկ է այցելում աշխարհի կրոնական վայրեր, շուրջ 600 միլիոն ազգային և միջազգային կրոնական ճանապարհորդություններ են գրանցվում, որոնց 40%-ը կատարվում է Եվրոպայում: Կրոնական ժառանգության վայրերը ոչ միայն խթանում են միջազգային զբոսաշրջությունն ու տնտեսական աճը, այլ նաև նպաստում են տար-

---

[1] Տե՛ս Հայաստանյայց եկեղեցին այսօր, Ո՞վ ենք մենք, https://www.armenianchurch.org /index.jsp?sid=1&id=10472&pid=3:

[2] Տե՛ս **Smith V.L.,** Introduction: The quest in guest. Annals of Tourism Research, 1992, Vol. 19, էջ 1–17:

[3] Տե՛ս Introduction to Religious Tourism, էջ 23-24, https://shodhganga.inflibnet.ac.in/bitstream /10603 /170387/7/07_chapter2.pdf:

բեր մշակույթների, ժողովուրդների միջև հարգանքի, հանդուրժողականության, փոխըմբռնման, խաղաղության հաստատմանն ու տարածմանը[4]:

Քրիստոնյաները ամենամեծ կրոնական խումբն են աշխարհում՝ 2.3 միլիարդ մարդ կամ աշխարհի 7.3 միլիարդ բնակչության 31.2%-ը, այնուհետև մահմեդականներն են՝ 1.8 միլիարդ մարդ կամ 24.1%, հինդուականները՝ 1.1 միլիարդ մարդ կամ 14%, բուդդիստները՝ 0.5 միլիարդ մարդ կամ 6.9%, չինական ժողովրդական կրոնին հարողները՝ 0.4 միլիարդ կամ 5.7%, իսկ ոչ հավատացյալները կազմում են 1.16 միլիարդ մարդ կամ աշխարհի բնակչության 16%-ը: Ըստ Pew Research Center-ի կանխատեսումների՝ 2060 թ. աշխարհի բնակչությունը կհասնի 9,6 միլիարդի: Քրիստոնյաները կկազմեն 3,05 միլիարդ կամ բնակչության 31.8%-ը, ավելի մեծ աճ կունենան մահմեդականները՝ 2,99 միլիարդ՝ կազմելով բնակչության 31.1%-ը, հինդուականները կդառնան 1.4 միլիարդ կամ բնակչության 14.5%-ը, ոչ հավատացյալները կկազմեն 1.2 միլիարդ մարդ կամ 12.5%[5]:

Երուսաղեմը, լինելով երեք կրոնների՝ քրիստոնեության, իսլամի և հուդայականության խաչմերուկ, տարեկան ընդունում է 3-3.5 միլիոն զբոսաշրջիկ՝ Իսրայելի զբոսաշրջիկների շուրջ 85%-ը[6]:

Քրիստոնյաների ուխտագնացությունն առաջին անգամ կատարվել է Քրիստոսի ծննդի, կյանքի, խաչելության և հարության հետ կապված վայրերում: Այնուհետև այլ սրբերի նահատակության վայրերը ևս դարձան ուխտատեղիներ: Ամենահայտնի և այցելվող ուխտատեղիներ են Երուսաղեմը, Վատիկանի Սուրբ Պետրոսի, Իսպանիայի Սանտիագո դե Կոմպոստելա տաճարները:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային ժառանգության» ցանկում ՀՀ-ից ներառված են Հաղպատի և Սանահինի վանական համալիրները (1996 թ.), Գեղարդի վանական համալիրը (2000 թ.), Էջմիածնի եկեղեցիները և Մայր տաճարը, Զվարթնոցի հնագիտական տաճարը (2000 թ.)[7]:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք ասել, որ կրոնական զբոսաշրջությունը ճանապարհորդություն կամ ուխտագնացություն է դեպի սուրբ վայրեր՝ կրոնական իրադարձություններին մասնակցելու կամ այլ հոգևոր նպատակներով: Ընդ որում, կրոնական նպատակներով կատարվող ճանապարհորդություններն ունեն զարգացման հին պատմություն՝ կապված տարբեր կրոնների առաջացման և տարածման հետ, և այսօր էլ աշխարհում այն համարվում է զբոսաշրջության ամենաարագ զարգացող տեսակներից մեկը:

Մեթոդաբանություն: Հետազոտության նպատակն է վերլուծել կրոնական զբոսաշրջության զարգացման նախադրյալները Արցախի Հանրապետությունում: Հետազոտության օբյեկտը Արցախի Հանրապետության կրոնական զբոսաշրջության ոլորտն է, առարկան՝ կրոնական զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրների և հնարավորությունների վերլուծությունը:

---

[4] Տե՛ս Tourism can protect and promote religious heritage, 2014, http://media.unwto.org/press-release /2014-12-10/tourism-can-protect-and-promote-religious-heritage:

[5] Տե՛ս The Changing Global Religious Landscape, 2017, http://www.pewforum.org/2017/04/05/the-changing-global-religious-landscape/:

[6] Տե՛ս Jerusalem is fastest-growing tourism destination in world, 2018, https://www.israel21c.org /jerusalem-is-fastest-growing-tourism-destination-in-world/, 4,120,800 tourists arrived in Israel in 2018, 2019, https://www.israel21c.org/4120800-tourists-arrived-in-israel-in-2018/:

[7] Տե՛ս Properties inscribed on the World Heritage List, http://whc.unesco.org/en/statesparties/am:

Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական, կոռելյացիոն վերլուծության, գրաֆիկական, ինդուկցիայի և պատմական մեթոդները: Կոռելյացիոն վերլուծությունը կատարվել է ներգնա զբոսաշրջիկների թվի և ՀՆԱ-ի միջև՝ հաշվարկելով Պիրսոնի R և դետերմինացիայի գործակիցները:

Վերլուծությունների արդյունքում կատարվել են կրոնական զբոսաշրջության զարգացմանն ուղղված առաջարկություններ:

Վերլուծություն

Զբոսաշրջության ոլորտն Արցախի Հանրապետությունում

Ըստ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ԼՂՀ օրենքի՝ զբոսաշրջությունը ճանաչողական, հանգստի, առողջարարական, մարզական, կրոնական, ազգականներին այցելության, մասնագիտական, գործնական և այլ նպատակներով բնակության մշտական վայրից (երկրից) այլ վայր (երկիր) առավելագույնը մինչև մեկ տարի անընդմեջ ժամկետով ճանապարհորդություն իրականացնող քաղաքացիների գործունեությունն է[8]:

Արցախի Հանրապետությունում զբոսաշրջության զարգացման համար պատասխանատու մարմինը ԱՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարությունն է:

Ըստ ԱՀ արտաքին գործերի նախարարության և ոստիկանության տեղեկատվության՝ 2018 թ. Արցախ է այցելել 28588 զբոսաշրջիկ 92 երկրից, նախորդ տարվա ընթացքում՝ 22453 զբոսաշրջիկ, 95 երկրից: Զբոսաշրջիկների թվաքանակը նախորդ տարվա համեմատ աճել է 6135-ով կամ 27,3%-ով: Զբոսաշրջիկների 55,5%-ը ժամանել է ՌԴ-ից, 12.2%-ը՝ ԱՄՆ-ից, 3.6%-ը՝ Ֆրանսիայից, 2,3%-ը՝ Գերմանիայից, 2,2%-ը՝ ԻԻՀ-ից և այլն[9]:

Նշենք, որ Հայաստանի Հանրապետությունից Արցախի Հանրապետություն ժամանող զբոսաշրջիկների թվաքանակը չի հաշվարկվում և հրապարակվում, մինչդեռ զբոսաշրջության ոլորտի զարգացման վրա միանգամայն մեծ ազդեցություն ունեն նաև Հայաստանից ժամանած զբոսաշրջիկները, որոնք հանգրվանում են հյուրանոցային տնտեսության օբյեկտներում, օգտվում են հանրային սննդի կետերից, տրանսպորտային ծառայություններից, կատարում են գնումներ և այլն: Ուստի, ԱՀ տնտեսության մեջ զբոսաշրջության ներդրումը համակողմանի գնահատելու համար պետք է հաշվարկել նաև Հայաստանից ժամանած զբոսաշրջիկների թվաքանակը և նրանց ծախսած գումարը:

Գծապատկեր 1-ի տվյալներից ակնհայտ է, որ տարեցտարի զբոսաշրջիկների թվաքանակն աճել է՝ 2010 թ. և 2011 թ.՝ 43%-ով, 2012 թ.՝ 37%-ով, 2013 թ.՝ 5%-ով: Անկում եղել է 2014 և 2016 թթ.՝ համապատասխանաբար 12 և 16%-ով, իսկ 2017 թ.՝ կտրուկ աճ՝ 61%-ով: 2018 թ. աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 27%: 2014 թ. անկումը կարելի է բացատրել նույն թվականի ամռանը սահմանին առկա լարվածությամբ, իսկ 2016 թ. անկումը պայմանավորված էր Ապրիլյան քառօրյա պատերազմով:

---

[8] Տե՛ս «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 2, ընդունված 24 նոյեմբերի, 2004 թ.:

[9] Տե՛ս ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 82-83, http://stat-nkr.am/files/publications/2018/Doklad_2018_hunvar_dektember/82-84-4-3-michazgajin%20zbosashrchik 17.pdf:



	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Միջազգային զբոսաշրջիկներ, որից ըստ նպատակի՝	5546	7924	11362	15559	16317	14375	16589	13960	22453	28588
գործնական	726	1022	1108	1404	843	893	1694	1162	5501	2940
հանգստի և ժամանցի	4763	6871	10222	14147	15470	13475	14861	12784	16949	25642
կրթության	6	3	20	8	4	7	4	14	3	6
այլ	49	28	12	0	0	0	0	0	0	0

Գծապատկեր 1. ***ԱՀ ժամանած զբոսաշրջիկների թվաքանակը 2009-2018 թթ.***[10]

Կոռելյացիոն վերլուծությունը (2009-2018 թթ. տվյալների հիման վրա) ցույց է տվել, որ ներգնա զբոսաշրջիկների թվի և ՀՆԱ-ի միջև Պիրսոնի R գործակիցը 0.821 է, իսկ դետերմինացիայի գործակիցը՝ R_2-ը՝ 0.674, այսինքն՝ զբոսաշրջիկների թվի փոփոխության ազդեցությունը ՀՆԱ-ի փոփոխության վրա 67% է:



Գծապատկեր 2. ***Կոռելյացիոն վերլուծություն ԱՀ զբոսաշրջության և ՀՆԱ-ի միջև***

Զբոսաշրջությունից ստացված ֆինանսական մուտքերն ու ելքերն արտացոլվում են վճարային հաշվեկշռում: ԱՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի ապրանքների և ծառայությունների արտահանում և ներմուծում ենթա-

[10] Աղբյուրը՝ ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009-2018 թթ., http://stat-nkr.am:

հաշվի ճանապարհորդության բաժինը 2018 թ. գնահատվել է -2227,2 հազար ԱՄՆ դոլար (կրեդիտ՝ 2284,7 հազար ԱՄՆ դոլար, դեբետ՝ 4511,9 հազար ԱՄՆ դոլար)[11]: Այսինքն, Արցախ ժամանած զբոսաշրջիկներից ստացված գումարը 2018 թ. կազմել է 2284,4 հազար ԱՄՆ դոլար, ուստի յուրաքանչյուր զբոսաշրջիկ միջինը ծախսել է 80 ԱՄՆ դոլար (նույն հաշվարկներով 2017 թ. մեկ զբոսաշրջիկի միջին ծախսը կազմել է 104 ԱՄՆ դոլար):

Ըստ ԱՀ ԱՎԾ տվյալների՝ կացության և հանրային սննդի ծառայությունների ծավալը 2018 թ. կազմել է ընդհանուր ծառայությունների 5,2%-ը (3514.0 մլն դրամ, որից կացության կազմակերպումը՝ 769,3 մլն դրամ, հանրային սննդի կազմակերպումը՝ 2744,7 մլն դրամ), որի 84,6%-ը բաժին է ընկել Ստեփանակերտին, 15,4%-ը՝ Արցախի Հանրապետության մյուս շրջաններին[12]: 2017 թ. ԱՀ-ում գործել է 53 հյուրանոցային տնտեսության օբյեկտ՝ 1475 ննջատեղով, իսկ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների թիվը կազմել է 10 կազմակերպություն՝ 9 զբոսաշրջային օպերատոր և 1 զբոսաշրջային գործակալ:

Թեև ըստ այցելության նպատակի Արցախ այցելած զբոսաշրջիկների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվության մեջ չի առանձնացվում, թե որքան են կազմում կրոնական նպատակներով ժամանած զբոսաշրջիկները, սակայն կարելի է ենթադրել, որ նրանք մտնում են հանգստի և ժամանցի նպատակով այցելած զբոսաշրջիկների թվաքանակի մեջ: Այս առումով հետաքրքիր են 2019 թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին իրականացված ընտրանքային հետազոտության արդյունքները, որին մասնակցել է ԱՀ այցելած 393 (մեկնող) և ԱՀ-ից մեկնած 305 (ժամանող) զբոսաշրջիկ: Արցախն ընտրելու հիմնական նպատակի վերաբերյալ հարցադրմանը մեկնողների 29.6%-ը նշել է «մշակույթ/պատմություն» պատասխանը, իսկ 31.1%-ը՝ «բնություն/տեսարժան վայրեր»: Հարցվածների միայն 9.1%-ն է Արցախ այցելել մասնագիտական շրջագայության, 3.5%-ը՝ ուխտագնացության նպատակով, իսկ 4.0%-ին գրավել է Արցախի հիմնախնդիրը: «Այլ» պատասխան ընտրածների մեծամասնությունն Արցախ այցելել է հարազատներին ու ընկերներին տեսակցելու և հայրենի եզերքում հանգստանալու նպատակով: «Այլ» պատասխան նշածների 4.8%-ը ժամանել է ֆուտբոլի, իսկ 2.3%-ը՝ համահայկական խաղերին ներկա գտնվելու նպատակով[13]:

Հետազոտության ժամանակ մեկնողները նաև գնահատել են Արցախի Հանրապետության զբոսաշրջության ոլորտում գոյություն ունեցող ծառայությունները և հարմարությունները: 5 բալանոց գնահատման համակարգում առավելագույն գնահատականի չի արժանացել և ոչ մի ծառայություն, իսկ ամենացածր գնահատականին արժանացել են ներքին ճանապարհները՝ 3,0 բալ (միջին) և գների մակարդակը՝ 3.6 բալ (միջին), իսկ ամենաբարձրին՝ տես-

---

[11] Տե՛ս Արցախի Հանրապետության վճարային հաշվեկշիռը 2015-2018 թթ., էջ 19, http://stat-nkr.am/files/publications/2019/vcharayin_hashiv_2018.pdf:

[12] Տե՛ս ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-դեկտեմբերին, էջ 35-37, http://stat-nkr.am/files/publications/2018/Doklad_2018_hunvar_dektember/33-37-1_2_6_arevtur% 26 carayutyun% 20nor.pdf:

[13] Տե՛ս Զեկույց զբոսաշրջության ոլորտում անցկացված ընտրանքային հետազոտության, Ստեփանակերտ, հոկտեմբեր, 2019 թ., էջ 10, 19, http://stat-nkr.am/files/publications/2019 /Zbosashrjutyun.pdf:

արժան վայրերը՝ 4.5 բալ (լավ): Տեսարժան վայրեր այցելածների 60,9%-ը դրանք գնահատել է «գերազանց», 27.4%-ը՝ «լավ», հանգստի գոտիներ այցելածների 35.9%-ը դրանք գնահատել է «գերազանց», 34.3%-ը՝ «լավ», 10,7%-ը գների մակարդակը գնահատել է «վատ», իսկ 43.0%-ի, 13.2%-ի և 12.6%-ի գնահատմամբ՝ ներքին ճանապարհները գտնվում են համապատասխանաբար բավարար, վատ և շատ վատ վիճակում: Զբոսաշրջիկների կողմից տրված առաջարկությունների մեջ կարևորվել են արցախցու բարեկեցությունը, տրանսպորտային և հյուրանոցային ծառայությունների մակարդակի բարձրացումը, մարզամշակութային, զվարճանքի և տեսարժան վայրերի ավելացումը և բարելավումը, ճանապարհների բարելավումն ու գների մատչելիության ապահովումը: Մեկնողներից 26-ը կամ 6.6%-ը պատասխանել է, որ հաջորդ տարիներին չի այցելելու Արցախ, քանի որ այցելությունը թանկարժեք է կամ մեկ այցելությունը բավարար է Արցախը ճանաչելու համար: Մեկնողների շուրջ 90.8%-ը պատասխանել է, որ հնարավոր է՝ հաջորդ տարիներին ևս այցելի Արցախ, 94.9%-ը՝ ընկերներին և հարազատներին ևս խորհուրդ կտա այցելել Արցախ, իսկ արդյոք հյուրասեր են արցախցիները, թե՝ ոչ հարցին՝ 94.9%-ը պատասխանել է «այո»[14]:

Արցախի կրոնական զբոսաշրջության կառույցների վերլուծությունը

Արցախի Հանրապետությունը հարուստ է կրոնական զբոսաշրջության վայրերով: Այս հատվածում համակարգված կներկայացնենք Արցախի կրոնական այն կառույցները, որոնք կարող են գրավել կրոնական զբոսաշրջիկներին:

- **Գանձասարի վանական համալիրը** գտնվում է Մարտակերտի շրջանի Վանք գյուղի մոտ՝ Գանձասար լեռան վրա: Համաձայն ժողովրդական տեղանվանության՝ լեռը «Գանձասար» է կոչվել արծաթի, պղնձի և այլ մետաղների հարուստ հանքեր ունենալու համար: Գանձասարի համալիրում են Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, գավիթը, պարիսպները, բնակելի խցերը, թաղածածկ սեղանատունը, դպրոցի երկհարկանի շենքը, իսկ համալիրից հարավ հին գերեզմանատունն է: Եկեղեցին և գավիթը հիմնվել են 13-րդ դարում, պարիսպները և սեղանատունը՝ 17-րդ դարում, դպրոցը՝ 19-րդ դարում: Գանձասարի վանքի մասին առաջին անգամ 10-րդ դարում հիշատակել է Ամենայն Հայոց կաթողիկոս Անանիա Մոկացին՝ Աղվանից տան ապստամբության մասին պատմող եկեղեցական իր կոչում: Վանքի գլխավոր հրաշալիքը Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին է, որի կառուցումը 1216 թ. սկսել է իշխան Հասան Ջալալ Վախթանգյանը: Գանձասարը 1400 թ. դարձել է Աղվանից կաթողիկոսության աթոռանիստը: ***Գանձասարում են ամփոփված նաև համաքրիստոնեական ու ազգային սրբերի մասունքներ, որոնցից նշանավորը Հովհաննես Մկրտչի գլուխն է***[15]: Գանձասարի Սուրբ Հովհաննես Մկրտչի

[14] Տե՛ս Զեկույց զբոսաշրջության ոլորտում անցկացված ընտրանքային հետազոտության, Ստեփանակերտ, հոկտեմբեր, 2019 թ., էջ 33-36, http://stat-kr.am/files/publications/2019 /Zbosashrjutyun.pdf:

[15] Տե՛ս **Ս.Ն. Օհանյան,** Վերծանելով արվեստի գաղտնագրերը: Փիլիսոփայական մտորումներ: Մաս առաջին, Եր., 2017, էջ 27-36:

եկեղեցին (1216-1238 թթ.) և գավիթը (1261 թ.) համարվում են հայ ճարտարապետական մտքի հանրագիտարան[16]:

- **Դադիվանքը** գտնվում է Արցախի պատմական Ծար գավառի (այժմ՝ Քարվաճառի շրջան) արևելյան կողմում՝ Թարթառ գետի ձախ ափին: Վանքը հիմնադրվել է մ.թ. առաջին դարում՝ քրիստոնեական քարոզչության նպատակով այստեղ եկած և նահատակված Դադիի գերեզմանի վրա: Ներկայումս վանական համալիրի տարածքում պահպանվել է շուրջ երեսուն կառույց. չորս եկեղեցի, երկու գավիթ, սյունասրահ, զանգակատուն, միաբանական խցեր, հուշարձաններ, աշխարհիկ շինություններ, որոնց հիմնական մասը կառուցվել է Զաքարյանների իշխանության տարիներին: Սուրբ Դադի միանավ բազիլիկ եկեղեցուց պահպանվել են պատերը, որոնք մասամբ հողի մեջ են խրված: Ենթադրաբար, եկեղեցին հիմնվել է 9-րդ կամ 13-րդ դարում[17]: Գրեթե բոլոր ուսումնասիրողների կարծիքով՝ Դադիի գերեզմանը կարող է լինել վանքի ամենավաղ կառույց համարվող Դադի եկեղեցու մեջ[18]: Դադիվանքի զանգակատան ներսում գտնվող 1283 թ. կերտված զույգ խաչքարերը քանդակի և գեղարվեստի համաշխարհային գլուխգործոցներ են[19]:
- **Ամարասի վանքը** գտնվում է Մարտունու շրջանի Մաճկալաշեն գյուղի մոտ՝ Խազազ և Լուսավորիչ սարերի միջև ընկած գոգահովտում: Ամարասի վանքի եկեղեցին հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը՝ 4-րդ դարի սկզբին: Եկեղեցու արևելյան կողմում է թաղված Աղվանքում քրիստոնեություն տարածելուն ուղղված իր առաքելության ընթացքում 338-ին նահատակված Գրիգորիսը: 5-րդ դարի սկզբին Մեսրոպ Մաշտոցը Ամարասի վանքում բացում է Արցախի առաջին դպրոցը, և վանքը դառնում է երկրամասի խոշոր կրոնական կենտրոն և եպիսկոպոսանիստ[20]: Ամարասի վանքում թաղված են նաև Սուրբ Զաքարեի և Սուրբ Բարդուղիմեոսի մասունքները[21]:
- **Ծիծեռնավանքը** գտնվում է Քաշաթաղի շրջանի Աղավնո գետի աջ ափին՝ Ծիծեռնավանք գյուղի մոտ: Ըստ որոշ կարծիքների՝ Ծիծեռնավանքի տեղում սկզբնապես եղել է հեթանոսական տաճար, որը հենց 4-րդ դարում վերածվել է եկեղեցու[22]: 1633 թ. կառուցվել են Ծիծեռնավանքի պարիսպները՝ կամարակապ մեծ դարպասով, հարավային կողմում՝ սեղանատունը: 1779 թ. եկեղեցին նորոգվել է: Մինչև 20-րդ դարը եղել է գործող վանք և մեծ ուխտատեղի, որտեղ Համ-

---

[16] Տե՛ս **Ս. Կարապետյան,** Արցախի հրաշալիքները, Եր., ՀՃՈՒ հրատ., 2010, էջ 16:

[17] Տե՛ս **Ս.Ն. Օհանյան,** Դադիվանք. լեռնային երկրի գոհարը, «Տնտեսագետ» ամսագիր, 2017, N1, Եր., էջ 44-46:

[18] Տե՛ս **Ս. Այվազյան,** Դադի վանքի վերականգնումը 1997-2011 թթ., Եր., ՀՃՈՒ հրատ., 2015 թ., էջ 52:

[19] Տե՛ս **Ս. Կարապետյան,** Արցախի հրաշալիքները, Եր., ՀՃՈՒ հրատ., 2010, էջ 14:

[20] Տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, գլխ. խմբ. Հովհ. Այվազյան, Հայկական հանրագիտարան հրատ., Եր., 2002, էջ 44-45:

[21] Տե՛ս Կրոնական, https://karabakh.travel/hy/religious/36/

[22] Տե՛ս **Ս. Կարապետյան,** Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, էջ 143:

բարձման և Սուրբ Խաչի երևման տոներին ողջ Սյունիքից ուխտավորներ են այցելել[23]:

- **Երիցմանկանց վանքը** (կառուցվել է 1691 թ.) գտնվում է Մարտակերտի շրջանում: Վանքը հիմնվել է Մելիք-Իսրայելյանների կողմից: Խաչաձև գմբեթակիր եկեղեցին շինված է անտաշ քարերով, սպիտակավուն, ներքուստ չորս քառակուսի սյուներով, բակում կան բնակելի սենյակներ: Եկեղեցու գմբեթն ամբողջովին կառուցված է սրբատաշ կաթնագույն քարից:
- **Եղիշե առաքյալի վանքը** գտնվում է Մարտակերտի շրջանում՝ Մատաղիս գյուղից հյուսիս, հայ-ադրբեջանական շփման գծի մոտ, անտառապատ լեռան լանջին: Մոտակայքում է գտնվում Ջրվշտիկ ջրվեժը: Կառուցվել է 5-րդ դարում՝ Աղվանից արքա Վաչագանի կողմից: Այստեղ են ամփոփվել սուրբ Եղիշեի մասունքները: Փոքրիկ եկեղեցու երկու կողմերում կառուցված են յոթ մատուռներ, որոնցից մեկը, կառուցված 1286 թ., Վաչագան Բարեպաշտի դամբարանն է: Վանքում է գտնվում նաև 18-րդ դարի Ջրաբերդի իշխան Մելիք Ադամի հանգստարանը:
- **Կատարո վանքը** գտնվում է Հադրութի շրջանում, ծովի մակերևույթից ավելի քան 2400 մետր բարձրության վրա՝ Դիզափայտ լեռան (2478) գագաթին: Սուրբ տաճարը վերաբերում է Հակոբին և վերաշինվել է 19-րդ դարում: Բուն հուշարձանը, դատելով տեղում պահպանված խաչքարերի մնացորդներից, թվագրվում է 17-րդ դարին: Կատարո վանքի կտուրից բացվում է մի համայնապատկեր, որն ընդգրկում է Արաքս գետը, Ղարադաղի լեռները, Արցախի դաշտը, Զանգեզուրի լեռները, Մեծ Մռավի կատարները:
- **Սուրբ Հովհաննես եկեղեցին** գտնվում է Հադրութի շրջանի Տող գյուղի կենտրոնում: Եկեղեցին շրջապատված է քարե պարսպով: Եկեղեցու ներսում, բակում և շրջակայքում պահպանվել են բազմաթիվ տապանաքարեր: Պատմաբան եպիսկոպոս Մակար Բարխուդարյանի կարծիքով՝ եկեղեցին կառուցվել 13-րդ դարում: Ինչպես Հայաստանի շատ եկեղեցիներ, Սուրբ Հովհաննես եկեղեցին նույնպես կառուցված է հին հեթանոսական մեհյանի հիմքերի վրա[24]:
- **Սուրբ Աստվածածին եկեղեցին** գտնվում է Ասկերանի շրջանի Ավետարանոց գյուղի կենտրոնում: Կառուցվել է 1651 թ.: Հնում եկեղեցում պահվել են ձեռագրեր, Ավետարան, խաչեր և այլ թանկարժեք սրբություններ:
- **Վանքասարի եկեղեցին** գտնվում է Մարտակերտի շրջանում՝ Ստեփանակերտից Մարտակերտ տանող մայրուղու ձախ կողմում՝ Վանքասար ժայռի գագաթներից ամենաբարձրի վրա: Կառուցվել է 7-րդ դարում: Ադրբեջանցիները 1970-ական թթ. վերականգնել են տաճարը՝ աղավաղելով իրական կերպարը:
- **Կանաչ ժամ կամ Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին** գտնվում է

[23] Տե՛ս Ծիծեռնավանք, http://www.armenianreligion.am/am/Encyclopedia_of_armenian_religion_ tses_Tsitsernakavank:

[24] Տե՛ս Սուրբ Հովհաննես եկեղեցի, Տող, ԼՂՀ (Հայաստան), http://www.building.am/arm /buildings-index/surb-hovhannes-church-togh-nkr-armenia/:

Շուշի քաղաքում: Անունը ծագել է ժամանակին եկեղեցու գմբեթի կանաչ գույնից: Եկեղեցին կառուցվել է 1818 թ., Ղարաբաղցոց նախկին փայտաշեն եկեղեցու փոխարեն, գործում է 1995 թվականից, վերջին տարիներին վերանորոգվել է:

- **Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին** գտնվում է Շուշի քաղաքի կենտրոնում: Կառուցվել է 1868-1887 թթ. Նախիջևանի Ղազանչի գյուղից Շուշի գաղթած բնակիչների միջոցներով: Սրբատաշ կաթնագույն կրաքարով կառուցված եկեղեցին հայկական ամենախոշոր եկեղեցիներից է (35 մ երկարությամբ, 23 մ լայնությամբ և 35 մ բարձրությամբ): Եկեղեցում պահվել է սուրբ Գրիգորիսի Աջը: Եկեղեցին գործել է մինչև 1930 թ.: 1988 թ. Շուշիից հայերին արտաքսելուց հետո ադրբեջանցիները ջարդել են զանգակատան հրեշտակների արձանները և եկեղեցին վերածել զինապահեստի: 1992 թ. մայիսի 8-ին Շուշիի ազատագրումից հետո շարունակվել է եկեղեցու և զանգակատան նորոգումը, որն ավարտվել է 1998-ին[25]: Եկեղեցին որոշակի ընդհանրություն ունի Էջմիածնի Մայր տաճարի հետ: Շուշիում եղել են նաև Ագուլեցոց եկեղեցին (1822 թ.), որի շենքը 1960 թ. ադրբեջանցիները քանդել են և դպրոց կառուցել, Մեղրեցոց եկեղեցին (1838 թ.), որից մնացել է արևելյան պատը, Կուսանաց վանքը (1816 թ.), որն ավերվել է 1960-70 թթ., Ռուս-հունական եկեղեցին (1830-1970 թթ.), որի տեղում կառուցել են մշակույթի տունը[26]:
- **Սուրբ Հակոբ եկեղեցին** (կառուցվել է 2005 թ., օծվել՝ 2007 թ.) գտնվում է մայրաքաղաք Ստեփանակերտում: Այն կառուցվել է ամերիկահայ բարերար Ներսես Եփրեմյանի հովանավորությամբ, որը եկեղեցին կառուցել է վաղամեռիկ որդու՝ Հակոբ Եփրեմյանի հիշատակին: 1991-ից հետո Արցախի թեմում, Սուրբ Հակոբից բացի, կառուցվել է ևս 11 նոր եկեղեցի: Դրանք են՝ Ս. Համբարձման (Բերձոր, օծվել է 1998 թ.), Ս. Նահատակաց (Աղավնո, 2002 թ.), Ս. Աստվածածին (Ասկերան, 2002 թ.), Ս. Ներսես Մեծ (Մարտունի, 2004 թ.), Ս. Սարգիս (Հարությունագոմեր, 2005 թ.), Ս. Սարգիս (Եղծահող, 2006 թ.), Ս. Անտոն (Զագլիկ, 2009 թ.), Ս. Գևորգ (Մեծ Շեն, 2011 թ.), Ս. Մարիամ Աստվածածին (Վաղուհաս, 2012 թ.), Ս. Գևորգ (Ներքին Հոռաթաղ, 2012 թ.), Ս. Հովհաննես Մկրտիչ (Քարագլուխ, 2013 թ.): 2019 թ. ապրիլի 7-ին տեղի ունեցավ Ստեփանակերտի Ս. Աստվածամոր Հովանի եկեղեցու (բարձրությունն ավելի քան 40մ) օծումը: Կառուցման փուլում են Ս. Պետրոս (Հաթերք), Ս. Գրիգոր Լուսավորիչ (Գիշի), Ս. Վարդանանց (Ճարտար) եկեղեցիները, ինչպես նաև Ստեփանակերտի ռուսական եկեղեցին[27]:

---

[25] Տե՛ս **Մ. Հասրաթյան,** Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցի, http://www.armenianreligion.am/am/Encyclopedia_of_armenian_religion_shushii_ghazanchetsots_s_amenaprkich_yekeghetsi:

[26] Տե՛ս **Мкртчян Ш., Давтян Щ.**, Шуши город трагической судьбы, Амарас, Ереван, 1997, էջ 18-21:

[27] Անկախությունից ի վեր Արցախում 12 եկեղեցի է կառուցվել, 4-ի շինարարությունն էլ ընթացքում է, https://hetq.am/arm/news/64015/ankakhutyunic-i-ver-arcakhum-12-ekexeci-e-karucvel-4-i-shinararutyunn-el-yntacqum-e.html:

Արցախում կան նաև այնպիսի եկեղեցիներ, որոնք ներկայում ավերված են կամ կիսավեր, ինչպես օրինակ՝ Բռի եկեղեցին՝ Հացի գյուղում, Գտչավանքը՝ Հադրութի շրջանի Տող գյուղի մոտ (վերականգնվում է), Թաղասերի անապատը՝ Հադրութի շրջանի Թաղասեր գյուղի մոտ, Խաթրավանքը՝ Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղից արևմուտք, Թարթառ գետի աջ ափին, Կարմիրավանը՝ Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի մոտ, Հակոբավանքը՝ Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղի մոտ, Հանդաբերդը՝ Շահումյանի շրջանի Քնարավան գյուղի մոտ, Հավապտուկ վանքը՝ Մարտակերտի շրջանի Վանք գյուղից 5 կիլոմետր հարավ, բարձր լեռան գագաթին, Հոռեկա վանքը՝ Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղից մոտ 5 կմ հարավարևմուտք, Մայրաքաղաք կամ Տիրամայր վանքը՝ Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղում, Պտկաթաղի վանքը՝ Հադրութի շրջանի Ծակուռի գյուղում, Օխտը դռնի վանքը՝ Հադրութի շրջանում, Յուղուսեն լեռան լանջին, Օխտը եղցին՝ Ասկերանի շրջանի Պտրեցիք գյուղի տարածքում, Օձկա վանքը՝ Ասկերանի շրջանի Բադարա գյուղի մոտ, Օջախ եկեղեցին՝ Մարտունու շրջանի Հաղորտի գյուղում և այլն:

Նշենք նաև, որ Արցախում կան մզկիթներ, որոնք կրոնական զբոսաշրջության տեսանկյունից կարող են գրավել մահմեդականներին: Դրանցից են Շուշիում 1883 թ. կառուցված Գյովհար Աղայի Ներքին և Վերին մզկիթները: Վերին մզկիթի վերականգնման նախագծային աշխատանքներին մասնակցել են իրանցի մասնագետներ: Մզկիթը վերաբացվել է 2019 թ. հոկտեմբերին: Մյուս մզկիթը գտնվում է Աղդամում և կառուցվել է 1870 թ.: Թեև այն որոշ չափով տուժել է պատերազմական գործողություններից, բայց գտնվում է համեմատաբար բարվոք վիճակում:

Նշենք նաև, որ ներկայում զբոսաշրջիկներն առավելապես այցելում են Շուշի, Գանձասար, Ամարաս, Տողի մելիքական ապարանք:

Եզրակացություններ: Ամփոփելով կարող ենք ասել, որ Արցախն ունի կրոնական զբոսաշրջության զարգացման էական ներուժ: Ե՛վ քրիստոնյա, և՛ մահմեդական կրոնական զբոսաշրջիկները կարող են այցելել Արցախի կրոնական վայրեր: Կատարված վերլուծությունները, սակայն, վկայում են, որ հստակ վիճակագրություն չկա, թե որքան զբոսաշրջիկ է այցելում կրոնական նպատակներով: Իհարկե, ակնհայտ է, որ Արցախ այցելած պատմամշակութային զբոսաշրջիկներն այցելում են նաև կրոնական վայրեր: Կարծում ենք, հաշվի առնելով Արցախի կրոնական զբոսաշրջության հիմնական ներուժը, անհրաժեշտ է մշակել կրոնական զբոսաշրջության զարգացման ծրագիր՝ սահմանելով տարբեր երթուղիներ:

Պետք է փաստել, որ Արցախի Հանրապետությունում զբոսաշրջության զարգացման լուրջ խոչընդոտ է արտերկրի հետ օդային կապի բացակայությունը և Ադրբեջանի հետ հակամարտությունը:

Կրոնական զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել.

- ակտիվ մարքեթինգային գործունեություն. ՀՀ-ում և արտերկրում մասնակցություն զբոսաշրջային ցուցահանդեսների, տարբեր երկրներից լրագրողների ճանաչողական այցերի կազմակերպում, որից հետո նրանք կնկարահանեն հաղորդումներ և ֆիլմեր, կտպագրեն նյութեր Արցախի կրոնական հրաշալիքների վերաբերյալ,

- բարելավել զբոսաշրջային ենթակառուցվածքները, զբոսաշրջային ծառայությունների գին-որակ ցուցանիշները,
- իրականացնել ոլորտի կադրերի պատրաստում և վերապատրաստում՝ միջազգային չափանիշներին համապատասխան,
- մշակել կրոնական զբոսաշրջության զարգացման ռազմավարական ծրագիր՝ ընդգրկելով բոլոր կրոնական վայրերը և մշակելով տարբեր երթուղիներ,
- Հայաստանի հետ միասին մշակել կրոնական զբոսաշրջության տարբեր տևողության տուրեր, այսինքն՝ միջազգային զբոսաշրջիկները կարող են այցելել ՀՀ և ԱՀ՝ ուխտագնացության տուրերի:

Կրոնական զբոսաշրջությունը կարող է զարգանալ և՛ որպես ուխտագնացության, և՛ որպես ճանաչողական զբոսաշրջություն: Կրոնական զբոսաշրջությունը կնպաստի զբոսաշրջային այցելությունների աճին՝ միևնույն ժամանակ մեծացնելով Արցախի ճանաչելիությունը: Ընդ որում, հաշվի առնելով մզկիթների առկայությունը՝ կրոնական զբոսաշրջությունը կարող է գրավել նաև հարևան Իրանի զբոսաշրջիկներին:

Այսպիսով, Արցախն իր պատմությամբ, մշակույթով, ճարտարապետությամբ ունի զբոսաշրջության զարգացման մեծ ներուժ, որը պետք է պատշաճ ներկայացնել և գրավել զբոսաշրջիկների:

Օգտագործված գրականություն

1. Այվազյան Ս., Դադի վանքի վերականգնումը 1997-2011 թթ., Եր., ՀՃՈՒ հրատ., 2015:
2. Արցախի Հանրապետության վճարային հաշվեկշիռը 2015-2018 թթ., http://stat-nkr.am/files/publications/2019/vcharayin_hashiv_2018.pdf:
3. «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ԼՂՀ օրենք, ընդունված 24 նոյեմբերի, 2004:
4. Զեկույց զբոսաշրջության ոլորտում անցկացված ընտրանքային հետազոտության, Ստեփանակերտ, հոկտեմբեր, 2019, http://stat-nkr.am/files /publications/2019/Zbosashrjutyun.pdf:
5. ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2018 թ. հունվար-դեկտեմբերին, http://stat-nkr.am/files/publications/2018/Doklad_2018_hunvar_dektember/82-84-4_3_michazgajin%20zbosashrchik_17.pdf:
6. ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009-2018 թթ. հրապարակումներ, http://stat-nkr.am:
7. Ծիծեռնավանք, http://www.armenianreligion.am/am/Encyclopedia_of_armenian_religion_tses_Tsitsernakavank:
8. Կարապետյան Ս., Արցախի հրաշալիքները, Եր., ՀՃՈՒ հրատ., 2010:
9. Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999:
10. Կրոնական, https://karabakh.travel/hy/religious/36/:
11. Հայաստանյայց եկեղեցին այսօր, Ո՞վ ենք մենք, https://www.armenianchurch.org/index.jsp?sid=1&id=10472&pid=3:
12. Հասրաթյան Մ., Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցի, http://www.armenianreligion.am/am/Encyclopedia_of_armenian_religion_shushii_ghazanchetsots_s_amenaprkich_yekeghetsi:

13. Սուրբ Հովհաննես եկեղեցի, Տող, ԼՂՀ (Հայաստան), http://www.building.am/arm/buildings-index/surb-hovhannes-church-togh-nkr-armenia/:
14. Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, գլխ. խմբ. Հովի. Այվազյան, Հայկական հանրագիտարան հրատ., Եր., 2002:
15. Օհանյան Ս.Ն., Վերծանելով արվեստի գաղտնագրերը: Փիլիսոփայական մտորումներ: Մաս առաջին, Եր., 2017:
16. Օհանյան Ս.Ն., Դադիվանք. լեռնային երկրի գոհարը, «Տնտեսագետ» ամսագիր, 2017 / N1, Եր.:
17. Мкртчян Ш., Давтян Щ., Шуши город трагической судьбы, Амарас, Ер., 1997.
18. Introduction to Religious Tourism, https://shodhganga. inflibnet.ac.in/bitstream/10603/170387/7/07_chapter2.pdf.
19. Jerusalem is Fastest-Growing Tourism Destination in World, 2018, https://www.israel21c.org/jerusalem-is-fastest-growing-tourism-destination-in-world/.
20. Properties Inscribed on the World Heritage List, http://whc.unesco.org/en /statesparties/am.
21. Smith V.L., Introduction: The Quest in Guest. Annals of Tourism Research, 1992, Vol. 19.
22. Tourism Can Protect and Promote Religious Heritage, 2014, http://media.unwto.org/press-release/2014-12-10/tourism-can-protect-and-promote-religious-heritage.
23. The Changing Global Religious Landscape, 2017, http://www.pewforum.org/2017/04/05/the-changing-global-religious-landscape/.
24. 4,120,800 Tourists Arrived in Israel in 2018, 2019, https://www.israel21c.org/4120800-tourists-arrived-in-israel-in-2018/.

ГАЯНЕ ТОВМАСЯН
Старший исследователь
исследовательского центра АГЭУ «Амберд»,
кандидат экономических наук

Предпосылки развития религиозного туризма в Республике Арцах.– Религиозный туризм включает в себя паломничество и религиозно-экскурсионные поездки. Целью статьи является анализ возможностей и перспектив развития религиозного туризма в Арцахе. Нашей задачей было определить сущность религиозного туризма, проанализировать текущее состояние туризма в Арцахе, выявить предпосылки для развития религиозного туризма, осмотреть основные религиозные места в Арцахе (церкви, монастыри, мечети, которые могут привлечь мусульманских туристов).

В результате исследования мы пришли к выводу, что Республика Арцах богата местами религиозного туризма, поэтому необходимо проводить активную маркетинговую деятельность по продвижению религиозного туризма, улучшить туристическую инфраструктуру, показатели качества и цены туристических услуг, подготовить кадры для обслуживания отрасли, разработать стратегический план развития религиозного туризма, включая все религиозные места и разрабатывая различные маршруты.

Ключевые слова: *туризм, религиозный туризм, церковь, монастырский комплекс, маркетинг, Республика Арцах.*
JEL: L83, Z10, Z12

GAYANE TOVMASYAN
Senior Researcher at "Amberd"
ASUE Research Center, PhD in Economics

Religious Tourism Development Backgrounds in the Republic of Artsakh.– Religious tourism includes pilgrimage and religious-excursion visits. The purpose of the paper is to analyze the opportunities and perspectives of religious tourism development in Artsakh. Our task was to define the essence of religious tourism, to analyze the current state of tourism in Artsakh, identify the backgrounds for the development of religious tourism observing the main religious places in Artsakh (churches, monasteries, mosques that can attract Muslim tourists).

As a result of the study, we came to the conclusion that the Republic of Artsakh is rich in religious tourism sites, so it is necessary to carry out active marketing activities to promote religious tourism, to improve tourism infrastructure, price-

quality services of tourism services, to prepare personnel in the field, to train the labor force, to elaborate a strategic program for the development of religious tourism, including all religious places and developing different routes.

Key words: *tourism, religious tourism, church, monastery complex, marketing, Artsakh Republic.*
JEL: L83, Z10, Z12